

ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄՈՒՄ

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին ՀՀ օրենքի՝ զբոսաշրջության վիճակագրության բարելավումը և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են:

Հայաստանում պաշտոնական վիճակագրությունը, այդ թվում նաև զբոսաշրջության բնագավառում, վարվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից: Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսանում սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ Հայաստան ժամանողների և Հայաստանից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները, ինչը ներկա պայմաններում բավարար ճշգրտություն չի ապահովում զբոսաշրջության վիճակագրության վարման համար:

Զբոսաշրջության վիճակագրության բարելավման և սահմանային էլեկտրոնային տեղեկատվական համակարգի (ՍԷԿՏ) միջոցով Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացման, ինչպես նաև ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների իրականացման նպատակով, ՀՀ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ (ՀՀ ԱԱԾ, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ պետական եկամուտների կոմիտե), մշակվել և դեռևս 2018 թվականի ապրիլի 12-ին N 14 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումը:

Որոշման նպատակն է ՍԷԿՏ համակարգի օգնությամբ էապես բարելավել զբոսաշրջության վիճակագրությունը՝ ապահովելով առավելագույն ճշգրտությամբ տվյալներ Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի (ՄԱԿ ԶԿԿ մեթոդաբանությանը և «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան), այդ թվում՝ ըստ քաղաքացիության, սեռատարիքային խմբերի, սահմանային անցման կետերի, ինչպես նաև զբոսաշրջային այցելությունների թվում կրկնվող այցելությունների քանակի վերաբերյալ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 14 արձանագրային որոշման՝ ՀՀ էՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից հայտարարվել է «Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրության բարելավման աշխատանքների իրականացում» միջոցառման կատարման համար կազմակերպության ընտրության մրցույթ: Մրցույթում հաղթող ճանաչված «Զենտա» ՍՊԸ-ի կողմից ավարտվել է համապատասխան համակարգչային ծրագրի մշակման և համապատասխան սերվերում (ՀՀ ԱԱԾ սերվերում)

ծրագրի տեղադրման գործընթացը և 2020 թ. առաջին եռամսակում արդեն իսկ գործարկվել է ծրագիրը:

Համակարգչային ծրագրի կիրառման արդյունքում ապահովվում է եռամսակային առավելագույն ճշգրիտ տվյալներ Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ՝ այդ թվում.

- ըստ քաղաքացիության,
- սեռատարիքային խմբերի,
- սահմանային անցման կետերի,
- այցի տևողության,
- ինչպես նաև զբոսաշրջային այցելությունների թվում կրկնվող այցելությունների քանակի վերաբերյալ:

2020 թ. առաջին եռամսակում ծրագիրը մեկնարկել է և ստացվել են առավել ճշգրիտ վիճակագրական տվյալներ Հայաստանի զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ: Նշված ծրագրով ստացված ճշգրիտ տվյալները և ոլորտում ճշգրիտ վիճակագրության վարումը էապես կնպաստեն Հայաստանի տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցության գնահատմանը, ոլորտում առավել ճշգրիտ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը՝ ի նպաստ Հայաստանում կայուն, համաչափ տարածքային տնտեսական զարգացման, ազգային եկամտի ավելացման, և բնակչության կենսամակարդակի բարձրացման:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն ՀՀ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ մշակել է «ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագծի ընդունման արդյունքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից օգտվողների ցանկում ներառել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ինչը կնպաստի կարճ ժամկետներում Հայաստանի Հանրապետություն ժամանումների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության ստացմանը և վերը նշված համակարգչային ծրագրին հասանելիության ապահովմանը, ինչի միջոցով հնարավոր կդառնա Զբոսաշրջության կոմիտեի կողմից վիճակագրական վերլուծությունների, հետազոտությունների, ինչպես նաև ոլորտում պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն ուղղված աշխատանքների առավել արդյունավետ կատարումը: